

## Մամվել Հարությունյան. Երիտասարդ գիտնականների համար վերադառնալու պայմաններ պետք է ստեղծվեն



Ուսանող և գիտություն հարաբերությունները մեր օրերում այդքան էլ ամուր չեն, պատճառները տարբեր են՝ ընդ որում արդարացված և չարդարացված: Գիտության ոլորտը վերջին տարիներին պետության ուշադրության կենտրոնում է, չնայած այդպես էլ մեծամասշտաբ քայլեր ներկայումս չեն ձեռնարկվում:

Ոլորտի զարգացման հեռանկարների, երիտասարդության և հատկապես ուսանողության ներգրավվածության, այս ոլորտում ուսանողների խնդիրների և այլ հարցերի շուրջ eMedia.am-ը զրուցել է Գիտության պետական կոմիտեի նախագահ Մամվել Հարությունյան հետ:

**–Նոր ժամանակներում ամբողջ աշխարհում գիտության և տեխնիկայի ոլորտում նոր նվաճումների անհրաժեշտությունը գերխնդիր է, այս տեսանկյունից ի՞նչ հարթության մեջ է Հայաստանը, ի՞նչ գործընթացներ են ընթանում:**

–Գիտության ոլորտը Հայաստանում սկսել է ավելի պոպուլյար դառնալ հատկապես վերջին երկու-երեք տարիներին, դա պայմանավորված է մի քանի պատճառներով՝ նախ 2002թ-ից Հայաստանի տնտեսությունը սկսեց վերելք ապրել, և մեր պետության ղեկավարները սկսեցինք գիտության դերը ավելի ճիշտ հասկանալ, որ տնտեսական վերելքի համար բնական ռեսուրսներ չունենալու պարագայում առանց գիտության ապագան դժվար է պատկերացնել: 2007թ-ին Կառավարության կողմից ընդունվեց գիտության բարեփոխումների հայեցակարգը, որով սահմանվում էր, թե առաջիկա տարիներին գիտության ոլորտում ինչ քայլեր են տարվելու, մասնավորապես այսպիսի դրույթ կար, որ պետք է ստեղծել գիտության կառավարման միասնական համակարգ, որը պատասխան կտան միջազգային կապերի, մասնավոր հատվածի համագործակցության համար: Եվ 2007թ-ին ստեղծվեց մեր կոմիտեն: Այս տարիներին անձնագրավորվեցին բոլոր գիտական հիմնարկները, հստակեցվեց կադրային բազան, 20 միջազգային համաձայնագրեր համաֆինանսավորման տարբերակով սկսեցին աշխատել: Բյուջեի տեսքը փոխվեց, հատուկ գումարներ հատկացվեցին գիտնականների արտասահմանյան գործուղումների

համար: Շպիգելի ամողջ բազան գնեցինք՝ մոտ 2000 ամսագրեր: 5000 էլեկտրոնային գրքեր արդեն ունենք մեր ձեռքի տակ: Լավ կլիներ, եթե բյուջեն ավելի մեծ լիներ, այսօր մեր բյուջեն 10 մլրդ դրամ է, հատուկ ծրագրերը հանած՝ 9 մլրդ:

**–Ի՞նչպիսին է երիտասարդության՝ հատկապես ուսանողների ներգրավվածությունը գիտության և տեխնոլոգիաների ոլորտում ընթացող հայաստանյան գործընթացներում:**

–Վերլուծելով մինչև 2008-2009թ-ը երիտասարդների ներգրավվածությունը գիտության մեջ հասկացանք, որ փոքր թիվ են կազմում նրանք: Գիտության պետական կոմիտեն գիտության երիտասարդացման ծրագիր է ներկայացնելու Կառավարություն: Ծրագրի որոշակի կետեր արդեն իրականացնում ենք, օրինակ՝ միջազգային և տեղական գրանտային ծրագրերին մասնակցության դեպքում թիմի մեջ մինչև 30 տարեկան երիտասարդ պետք է լինի: Հատուկ մինչև 30 տարեկան երիտասարդների համար գրանտային ծրագրեր ունենք: Նպատակ ունենք նաև ասպիրատների կրթաթոշակները բարձրացնել: Այսօր գիտական ծրագրերի մեջ 35 տոկոսը երիտասարդներ են, նրանց ներգրավվածությունն աճել է: Եթե բյուջեն թույլ տա կիրականացնենք լավագույն 50 երիտասարդ գիտնականների ծրագիրը:

Ունենք նաև երիտասարդների համար ամառային դպրոցների ծրագրեր, դրսից հրավիրում ենք մասնագետներ, ովքեր երիտասարդ գիտնականների համար դասախոսություններ են կարդում: Արտերկրում զեկուցումների ժամանակ վճարում ենք ճանապարհածախսերը: Բնակարանային շինարարության արդեն ընթացքի մեջ է, մոտակա մեկ տարում շահագործման կհանձնվի ծրագրի մյուս մասը: Նման ծրագիր իրականացվում է նաև ակադեմիայում:

**–Կա՞ն համարժեք պայմաններ ուսանողների համար, որոնք հնարավորություն կտան նրանց իրենց տեսական գիտելիքներն օգտագործել գործնական հարթության մեջ:**

– Գործնական միջավայրը բավարար չէ, քանի որ մեր տնտեսությունը թերի զարգացած է, հնարավորությունը գործնականում օգտագործել գիտելիքները քիչ է: Եթե տնտեսությունը զարգացած չի, չենք կարող օգտագործել մեր գիտական առաջընթացը, մեզ մոտ գիտությունն ավելի է զարգացել, քան տնտեսությունը, դրանք պետք է զուգահեռաբար զարգանան: Այսօր Հայաստանում իրական բիզնեսը լավ չեն պատկերացնում, 1 դոլար դնելով երկու օրից գոնե 2 դոլար ստանալու ակնկալիք ունեն, ներմուծում են միայն տեխնոլոգիաներ: Իրականում պետք է պատվեր տան գիտնականին, ստանան գիտական արդյունք և 5-6 անգամ ավելի մեծ եկամուտ ստանան:

**–Ի՞նչ հնարավորություններ ունեն հայ ուսանողները դրսում վերապատրաստում և որակավորում ստանալու համար:**

–Մենք այսօր վերապատրաստման խնդիր չունենք, մեզ ձեռնտու չի, քանի որ երիտասարդները գնում են ու մնում, այստեղ պետք է նորմալ պայմաններ ստեղծել, որ գնան և վերադառնան հետ: Չնայած հումանիտար ոլորտում

կա վերապատրաստման անհրաժեշտություն, օրինակ հայագիտության, սեպագրերի և օսմաներենի մասնագետներ չունենք:

**–Ո՞րոնք են այն խնդիրները, որ այսօր ուսանողներն ունենում են գիտության և տեխնոլոգիաների ոլորտում և ի՞նչ լուծումներ կարող են ունենալ:**

–Սոցիալական խնդիրն է առաջինը, պետք է նորմալ վճարել, որ գիտնականի ընտանիքը նորմալ ապրի և կոնֆորտ ունենա: Եթե քիչ վճարվի, չի կարող նորմալ աշխատել: Պետք է գիտության ոլորտում լավագույններին ընտրենք մրցութային կարգով և նորմալ վճարենք, որ սերուցքը մնա: Նաև ծրագիր ունենք, որ հայ երիտասարդը դրսից դրամաշնորհներ բերի Հայաստան, թիմեր պահի Հայաստանում և պետությունը նրան վճարի 1500 կամ 2000 դոլար աշխատավարձ: Պետք չափանիշներ սահմանել, որ եթե երիտասարդ գիտնականի գործունեությունն այդ

ցուցանիշներին բավարարի, հավելավճարներ կստանա: Մաքուր լաբարատորիաները և ժամանակակից սարքավորումները ևս կարևոր են, մենք ինստիտուտներ ունենք, որ անմխիթար վիճակում են, սարքավորումները հին են: Պետք է դրանցից մի քանիսը օպտիմիզացնել: Մյուս խնդիրը բնակարանաշինությունն է, որը պետք է շարունակական լինի:

**–Ի՞նչպես եք տեսնում գիտության և տեխնոլոգիաների ապագան հայ երիտասարդների մասնակցությամբ, կարո՞ղ են նրանք նոր հորիզոններ նվաճել:**

–Անկասկած կարող են նոր ձեռքբերումներ ունենալ, վստահ եմ, որ հայ կինը շարունակում է իելացի երեխաներ ունենալ: Մեր գիտական միտքը պայմանավորված է մեր գենետիկայի հետ: Պետության ղեկավարները հասկանում են, որ ապագան երիտասարդներին է և պետք բավարար պայմաններ ստեղծել նրանց համար:

Զրույցը վարեց Գայանե Ասրյանը